

«Վանի թագավորության ծիսական արվեստը»

«Միերի դուռ» կամ «Ագռավու քար», սրբազան քարաժայռ է Վանա բերդի մոտ: Ըստ ավանդության, այդտեղ փակված է աշխարհի անարդարություններից խռոված «Սասնա ծռեր» դյուցազներգության վերջին հերոսը՝ Փոքր Միերը: Մի գրույցի համաձայն՝ ամեն տարի, Համբարձման ու Վարդավառի գիշերը, երբ երկինքն ու երկիրը համբուրվում են, Միերն իր հրեղեն նժույգով դուրս է գալիս, շրջում երկնքում և երկրում, բայց համոզվելով, որ դեռ «գետինը չի կարող դիմանալ իր ծանրությանը», նորից վերադառնում է իր տեղը: Ապագայում իբր Միերը դուրս է գալու այնտեղից՝ ազատելու «հայու աշխարհը» չար ուժերից և հիմնելու երջանիկ թագավորություն...



«Վանի թագավորության ծիսական արվեստը» թեմայով դասախոսությամբ Հայաստանի ազգային գրադարանում այսօր ներկայացավ Արվեստի գրականության եւ ոչ գրքային հրատարակությունների բաժնի աշխատակից Գայանե Պողոսյանը: «Վանի թագավորությունում զարգացած են եղել քանդակագործությունը, արվեստը, որմնանկարչությունը, մետաղաձուլությունը, ճարտարապետությունը», - Վանի թագավորության հարուստ մշակույթը ներկայացնելով՝ ընդգծեց բանախոսը:

Թամանյանական մասնաշենքի երրորդ հարկում գտնվող արվեստի ընթերցասրահում ներկայացվեց նաև Վանի թագավորությանը վերաբերող գրականություն՝ պատկերազարդ ալբոմներ ու գրքեր:

Միջոցառմանը ներկա էին տարբեր բուհերի դասախոսներ ու ուսանողներ, ընթերցողներ, գրադարանի աշխատակիցներ: